Հավելված
ՀՀ կառավարության 2002 թվականի
դեկտեմբերի 19-ի N 2172-Ն որոշման

ԾՐԱԳԻՐ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ

I. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2003 թվականի ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) մշակման և իրականացման հիմքը 2000 թվականի դեկտեմբերի 5-ի «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն է:

Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել նաև՝

ա) 2000 թվականի հունիսին Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից ընդունված Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագիրը,

բ) Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները (Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի օգոստոսի 3-ի նիստի N32 արձանագրության 3-րդ կետ),

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի դեկտեմբերի 27-ի N1281 որոշմամբ հաստատված Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2002 թվականի պետական ծրագիրը,

դ) 2002 թվականի հոկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության Նախագահի մոտ կայացած խորհրդակցության ՀՆԱ-22 արձանագրությունը:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակները և խնդիրներն են՝

ա) փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) սուբյեկտների աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում և ամրապնդում,

բ) ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնում,

գ) ՓՄՁ-ի սուբյեկտների արտահանման հնարավորությունների ընդլայնում,

դ) ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցություն,

ե) ՓՄՁ-ի սուբյեկտների՝ գործարար տեղեկատվության, խորհրդատվության, ուսուցման ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնում,

զ) ՓՄՁ-ի սուբյեկտների վիճակագրության վարման կատարելագործում:

III. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2003 թվականի համար նախատեսված ծրագրային միջոցառումների համակարգն ընդգրկում է ՓՄՁ-ի ոլորտի զարգացման և պետական աջակցության հետևյալ հիմնական ուղղությունները՝

1. ***«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի գործունեության ընդլայնում, դրա մարզային 3 մասնաճյուղերի ստեղծում***

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) իր գործունեությունը ծավալել է ՓՄՁ-ի զարգացման պետական քաղաքականության ու ոլորտի զարգացման ծրագրերի իրականացման ուղղությամբ: Այն իրականացնում է նաև Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ-ի ոլորտի զարգացման ծրագրերի համակարգման գործառույթը:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը, իրականացնելով ոլորտի զարգացման պետական ծրագիրը, աշխատանքներ է կատարել տեղեկատվական ու խորհրդատվական ծառայությունների դաշտի ընդլայնման, ինչպես նաև ՓՄՁ-ի ոլորտի կադրերի մասնագիտական ուսուցման և վերապատրաստման համար:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը նշված ծրագրերն իրականացնում է դոնոր կազմակերպությունների հետ համատեղ՝ համաֆինանսավորման սկզբունքով:

Ներկայումս Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ (մասնավորապես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն, Համաշխարհային բանկ, Գերմանիայի տեխնիկական համագործակցության կազմակերպություն և այլն) վարում է բանակցություններ 2003 թվականին և հետագայում համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի իրականացման շուրջ:

Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության իրականացման, մասնավորապես Հայաստանի Հանրապետության մարզերում ՓՄՁ-ի սուբյեկտներին տեղեկատվական, խորհրդատվական ծառայությունների մատուցման, ինչպես

նաև ուսուցողական ծրագրերի մշակման ու իրականացման, այդ թվում ՓՄՁ-ի ոլորտի կադրերի մասնագիտական ուսուցման ու վերապատրաստման դասընթացների կազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության մարզերում (առավելապես հեռավոր և սահմանամերձ) կստեղծվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի 3 մասնաճյուղ: Այդ մասնաճյուղերի գործունեությունը կնպատակաուղղվի ՓՄՁ-ի զարգացման տարածաշրջանային և մարզային ու համայնքային ծրագրերի իրականացմանը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման գերակայությունները, առանձին բնակավայրերի առանձնահատկությունները և ներուժը:

2. ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն ու մտավոր սեփականության պաշտպանությանն աջակցությունը

ՓՄՁ-ի սուբյեկտների զարգացմանը նպաստող առավել արդյունավետ միջոցներից է նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, որը հնարավորություն է ընձեռնում ընդլայնելու և ավելացնելու արտադրվող արտադրանքի տեսականին, բարձրացնելու դրանց որակն ու կրճատելու արտադրական ծախքերը: Դա իր հերթին հնարավորություն կտա բարձրացնելու ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից արտադրվող ապրանքների մրցունակությունը ներքին և արտաքին շուկաներում:

ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման խրախուսման, մտավոր սեփականության պաշտպանությանն աջակցության գործում հատկապես կարևորվում է պետության աջակցությունը, և այդ նպատակով 2003 թվականին կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝

ա) նորարարությունների, ժամանակակից տեխնոլոգիաների և դրանցում ներդրումներն ապահովող ծրագրերի տեղեկատվական բազայի ստեղծում,

բ) ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների ներդրմանն աջակցություն,

գ) ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից արտոնագրերի ձեռքբերման և դրանց հեղինակային իրավունքների պաշտպանությանն աջակցություն,

դ) ժամանակակից տեխնոլոգիաների և նորարարական ծրագրերի մասին տեղեկատվության տրամադրում,

ե) նորարարական ծրագրերի և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում, ինչպես նաև ուսուցողական ծրագրերի և դասընթացների կազմակերպում,

զ) աջակցություն ցուցահանդեսներում և տոնավաճառներում ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից առաջարկվող նորարարությունները ներկայացնելուն՝ օգտագործելով նաև ինտերնետ կապի հնարավորությունները:

3. ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցությունը

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեության ընդլայնման արդյունքում այն կսկսի իրականացնել «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական ու ներդրումային աջակցության և ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխիքներ տրամադրելու գործառույթը:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսավորման (վարկավորման) հետ կապված հիմնախնդիրները հաղթահարելու, նրանց ֆինանսական ու ներդրումային աջակցություն ցուցաբերելու նպատակով 2003 թվականին կիրականացնի ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխիքների տրամադրման սխեմաների և մեխանիզմների մշակումն ու կիրառումը, ինչը հաջողությամբ կիրառվում է ինչպես զարգացած, այնպես էլ անցումային տնտեսություն ունեցող երկրներում: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ծրագրային այս միջոցառման իրականացման համար փորձագիտական աջակցություն կստանա Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության կողմից:

Նախատեսվում է ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխիքները տրամադրել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցով, որը պայմանագրային հիմունքներով կհամագործակցի ՓՄՁ-ի սուբյեկտների վարկավորման ծրագրեր իրականացնող բանկերի հետ:

Վարկային երաշխիքներ կտրամադրվեն ՓՄՁ-ի այն սուբյեկտներին, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության տնտեսության գերակա ճյուղերում (ոլորտներում), ինչպես նաև հիմք ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության տարածաշրջանային քաղաքականության գերակայությունները:

4. ՓՄՁ-ի սուբյեկտներում որակի և շրջակա միջավայրի կառավարման միջազգային ստանդարտների (ԻՍՕ 9000 շարքի և ԻՍՕ 14000 շարքի) ներդրումը

Շուկայական տնտեսավարման պայմաններում, հատկապես ՓՄՁ-ի սուբյեկտների համար, ձեռնարկատիրական արդյունավետ գործունեություն ծավալելու հիմնական գրավականը թողարկվող արտադրանքի, մատուցվող ծառայությունների համապատասխանեցումն է միջազգային ստանդարտներին: Մասնավորապես, ներքին շուկայում ամրապնդվելու և արտաքին շուկաներ մուտք գործելու կարևոր նախապայման է որակի կառավարման (ԻՍՕ 9000 շարքի) միջազգային ստանդարտների ներդրումը:

Տնտեսավարող սուբյեկտներում որակի կառավարման համակարգերի ներդրումն էականորեն բարելավում է դրանց կառավարման արդյունավետությունը, ավելի մատչելի է դարձնում տեղեկատվությամբ ապահովումը և, վերջապես, բարձրացնում նշված սուբյեկտների մրցունակությունն ու հեղինակությունը:

Վերջին տարիներին կարևոր նշանակություն է տրվում տնտեսության կայուն զարգացման, շրջակա միջավայրի պահպանության հարցերին: Հետևաբար, տնտեսավարող սուբյեկտները, այդ թվում՝ ՓՄՁ-ի սուբյեկտները պետք է ձգտեն իրենց գործունեությունը համապատասխանեցնել շրջակա միջավայրի պաշտպանության (ԻՍՕ 14000 շարքի) միջազգային ստանդարտների պահանջներին:

Ներկայումս ՓՄՁ-ի սուբյեկտները որակի կառավարման համակարգերի ներդրման հետ կապված տեխնիկական ու ֆինանսական աջակցության կարիք ունեն:

Ելնելով նշված նկատառումներից և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման գերակայություններից՝ 2003 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում կցուցաբերվի աջակցություն ՓՄՁ-ի սուբյեկտներում որակի կառավարման (ԻՍՕ 9000 շարքի) և շրջակա միջավայրի պաշտպանության (ԻՍՕ 14000 շարքի) միջազգային ստանդարտների ներդրմանը, ինչպես նաև կկազմակերպվեն ԻՍՕ 9000 շարքի և ԻՍՕ 14000 շարքի միջազգային ստանդարտների ներդրման գործընթացներին նվիրված սեմինարներ, կհրատարակվեն համապատասխան տեղեկատվական նյութեր:

5. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվություն և խորհրդատվության տրամադրումը

ՓՄՁ-ի սուբյեկտներին տեղեկատվությամբ ապահովումը դրանց արդյունավետ գործունեության հիմնական երաշխիքներից է: ՓՄՁ-ի սուբյեկտներին անհրաժեշտ է ունենալ օպերատիվ տեղեկատվություն ընդհանուր տնտեսական վիճակի (կոնյունկտուրայի), արտաքին և ներքին շուկաներում, իրավաօրենսդրական դաշտում կատարվող փոփոխությունների, գիտատեխնիկական առաջընթացի ու բարձր տեխնոլոգիաների կիրառման, պետական գնումների իրականացման ընթացքի և ձեռնարկատիրության ոլորտին առնչվող այլ գործընթացների մասին: Նման տեղեկատվությունը հիմնականում տարածվում է զանգվածային լրատվության միջոցներով, որը միշտ չէ, որ ամբողջական է, և չի բավարարում գործարարների պահանջները:

Ծրագիրը նախատեսում է տեղեկատվական ու վերլուծական նյութերի և պարբերականի հրատարակում (դրանք կտեղադրվեն նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ինտերնետային էջում)՝ ինչը համապարփակ գործարար տեղեկատվությամբ կապահովի Հայաստանի գործարար համայնքին (ՓՄՁ-ի սուբյեկտներ, բիզնեսին աջակցող կառույցներ և ՓՄՁ-ի շահերը ներկայացնող այլ կառույցներ):

ՓՄՁ-ի սուբյեկտների արդյունավետ գործունեության հիմնական երաշխիքներից և կարևոր նախադրյալներից է նաև ՓՄՁ-ի սուբյեկտներին խորհրդատվությամբ ապահովումը, որը հիմնականում իրականացվում է հասարակական ու առևտրային կազմակերպությունների կողմից: Դրանք հիմնականում մատչելի չեն ՓՄՁ-ի սուբյեկտներին և ծրագրով նախատեսվում

է շարունակել պետական աջակցությունը խորհրդատվական ծառայությունների մատուցման մատչելիության ապահովման գործում: Խորհրդատվությունը կիրականացվի շուկայավարման ծառայությունների մատուցման, ներքին և արտաքին շուկաներում ապրանքների ու ծառայությունների իրացման ուղղություններով: Կիրականացվեն նաև մաքսային բրոքերի ինստիտուտի ձևավորման ու զարգացման միջոցառումներ, մասնավորապես, հեռավոր և սահմանամերձ շրջաններում:

6. Ուսուցումը և ՓՄՁ-ի ոլորտի կադրերի մասնագիտական վերապատրաստումը

Որպես տեխնիկական բնույթի առաջնահերթ հիմնախնդիր կարելի է առանձնացնել գործարարների համապատասխան գիտելիքների, ֆինանսական, հաշվապահական հաշվետվությունները գրագետ կազմելու և գործարար ծրագրեր մշակելու ունակությունների պակասը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանը օրենսդրությանը թերի տիրապետելը և այլն:

Ուսուցողական և ՓՄՁ-ի ոլորտի կադրերի մասնագիտական վերապատրաստման ծառայություններն ունեն իրենց դրական ազդեցությունը, սակայն հաճախ իրականացվում են կարճաժամկետ ծրագրերի շրջանակներում, համակարգված չեն, ինչը էապես նվազեցնում է դրանց արդյունավետությունը:

2003 թվականին ուսուցողական և ՓՄՁ-ի ոլորտի կադրերի մասնագիտական վերապատրաստման դասընթացները կիրականացվեն ՓՄՁ-ի սուբյեկտների կառավարման հիմնահարցերի, շուկայավարման հիմունքների, հաշվապահական հաշվետվությունների, ընկերությունների ֆինանսավորման և ֆինանսական կառավարման հնարավորությունների, ինչպես նաև ՓՄՁ-ի ոլորտի կադրերի մասնագիտական վերապատրաստման և այլ ուսուցման թեմաներով:

7. ՓՄՁ-ի ոլորտի ամփոփ վիճակագրության վարումը

Համաձայն Հայաստանում ՓՄՁ-ի զարգացման 2002 թվականի պետական ծրագրի՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվել են ՓՄՁ-ի սուբյեկտների վիճակագրության վարման նախապատրաստման, ինչպես նաև այդ գործընթացի շարունակականությունն ապահովող աշխատանքներ:

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2002 թվականին պատրաստվել են Հայաստանում տնտեսական գործունեության որոշ ոլորտների (ճյուղերի) կտրվածքով՝ ըստ տնտեսավարող սուբյեկտների աշխատողների թվի, վիճակագրական-տեղեկատվական նյութեր, որոնցում տնտեսավարող սուբյեկտները

դասակարգված են՝ համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

Սակայն նշված վիճակագրական տեղեկատվությունը հնարավորություն չի տալիս լիարժեք պատկերացում կազմելու Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ-ի ոլորտի վերաբերյալ, քանի որ այն չի ընդգրկում երկրի տնտեսության բոլոր ոլորտները (ճյուղերը) և չի ներկայացնում ՓՄՁ-ի ոլորտն ամբողջությամբ: Անհրաժեշտ է կազմել տարեկան հաշվետվություն ՓՄՁ-ի ոլորտի մասին:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Ծրագիրն իրականացվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և սույն ծրագրով նախատեսված ՓՄՁ-ի ոլորտին աջակցող այլ կառույցների միջոցով:

2. Համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ՓՄՁ-ի զարգացման տարեկան պետական ծրագրերի ֆինանսավորումը, որն արտացոլվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում՝, առանձին տողով, կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

3. Ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը՝ համաձայն հավելվածի, մշակում է Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը:

4. Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համաձայնությունների շրջանակներում 2003 թվականին կիրականացվեն ՓՄՁ-ի ոլորտի զարգացման համատեղ ծրագրեր (համաֆինանսավորման սկզբունքով)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվում են մրցութային կարգով ընտրված բիզնեսին աջակցող և ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ՆԱԽԱՐԱՐ Մ. ԹՈՓՈՒԶՅԱՆ

Հավելված
փոքր և միջին ձեռնարկատիրությանը
պետական աջակցության 2003 թվականի
ծրագրի

Ց Ա Ն Կ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Կատարողը	Կատարման ժամկետը
1.	«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի գործունեության ընդլայնում, դրա մարզային 3 մասնաճյուղերի ստեղծում	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ	2003 թվականի առաջին կիսամյակ
2.	ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն ու մտավոր սեփականության պաշտպանությանն աջակցություն	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ	2003 թվական
3.	ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցության նպատակով ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխիքների տրամադրման սխեմաների և մեխանիզմների մշակում, ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխիքների տրամադրման փորձնական ծրագրի իրականացում	Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարություններ	2003 թվական
4.	Փոքր և միջին ձեռնարկություններում որակի և շրջակա միջավայրի կառավարման միջազգային ստանդարտների (ԻՍՕ 9000 շարքի և ԻՍՕ 14000 շարքի) ներդրմանն աջակցություն	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ	2003 թվական
5.	ՓՄՁ-ի սուբյեկտներին տեղեկատվական, խորհրդատվական և շուկայավարման ծառայությունների մատուցում, ներքին և արտաքին շուկաներում ապրանքների և ծառայությունների իրացմանն ու պետական գնումներին մասնակցությանն աջակցություն, տեղեկատվական ու վերլուծական նյութերի և պարբերականի հրատարակում	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ	2003 թվական
6.	Ուսուցողական և ՓՄՁ-ի ոլորտի կադրերի մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպում ինչպես ՓՄՁ-ի սուբյեկտների, այնպես էլ ուսուցողական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ	2003 թվական
7.	ՓՄՁ-ի ոլորտի ամփոփ վիճակագրության վարում	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության համաձայնությամբ	2003 թվական
8.	Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ ծրագրերի մշակում և իրականացում	Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարություններ	2003 թվական